

Կ Ա Ր Գ

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ԵԿԱՄՏԱՅԻՆ
ՀԱՐԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ՝ ԱՆՁԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅԱՄԲ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱ-
ՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԸ ԵՎ (ԿԱՄ) ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿԸ
ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱԳՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են նոր աշխատողի համար գրանցման հայտում
և (կամ) եկամտային հարկի ամփոփ հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող՝
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման
ենթակա տեղեկատվություն պարունակող գրանցման հայտը և (կամ) եկամտային հարկի
ամփոփ հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու կարգի հետ կապված հարաբե-
րությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է «Եկամտային հարկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նոր
աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) համար գրանցման հայտ և (կամ) եկա-
մտային հարկի ամփոփ հաշվարկ ներկայացնելու պարտավորություն ունեցող հարկային
գործակալների (գործատուների) վրա:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված հարկային գործակալները (գործատուները)՝

1) գրանցման հայտեր չեն ներկայացնում այն անձանց համար, որոնց վերա-
բերող՝ գրանցման հայտում ներառվելիք տեղեկատվությունը Հայաստանի Հանրապե-

տության օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն.

2) եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում այն անձանց, որոնց վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, եկամուտների և դրանցից պահված եկամտային հարկի գումարներն արտացոլում են հաշվարկի համապատասխան տողում՝ հանրագումարային տեսքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ